Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2020 թվականի փետրվարի 17-21-ը, Նիդեռլանդների Թագավորություն, Ամստերդամ

4. Հրավիրող կողմը

«PUM նիդեռլանդացի ավագ մասնագետներ» կազմակերպություն

5. Գործուղման նպատակը

Այցի նպատակն էր ուսումնասիրել Նիդեռլանդների առողջապահության կազմակերպման և կառավարման համակարգը, ինչպես նաև բանակցություններ վարել երկկողմ համագործակցության շուրջ:

6. Քննարկված թեմաները

Այցի շրջանակներում նիդեռլանդական կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Հայաստան կժամանի փորձագետների խումբ՝ իրականացնելու բժշկական ծառայությունների, հիվանդությունների և որակի կառավարման, նաև՝ կոնկրետ մասնագիտությունների մասով, վերապատրաստումների կարիքների

գնահատում, կկազմվի ճանապարհային քարտեզ՝ վերոհիշյալ ոլորտներում համագործակցության շուրջ:

Հանդիպումներ տեղի ունեցան նիդեռլանդական FMO զարգացման բանկի և «Ֆիլիփս» ընկերության հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են առողջապահության ոլորտում հիվանդանոցների կառուցման, վերանորոգման և սարքավորումներով վերազինման հնարավորությունները: FMO զարգացման բանկը պատրաստակամություն է հայտնել նիդեռլանդական ապրանքների արտահանման խրախուսման ծրագրի շրջանակներում Հայաստանին տրամադրել նախագծա-նախահաշվային ծառայություններ: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում «Ֆիլիփս» ընկերությունը ծրագրի արժեքի 35%-ի չափով դրամաշնորհ կտրամադրվի Հայաստանին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան նիդեռլանդական մի շարք առաջատար հիվանդանոցների, ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև առաջատար տեխնոլոգիաներ արտադրող կազմակերպությունների, վերապատրաստման դասընթացներ կազմակերպող հաստատությունների և համապատասխան մասնագետների հետ, ներկայացվեցին Նիդեռլանդների առողջապահության կազմակերպման և կառավարման համակարգը, հիվանդանոցների ղեկավարման սկզբունքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը նիդեռլանդական կողմի հետ:

9. Առաջարկությունները

Հայաստանյան պատվիրակության անդամները ջանքեր կներդնեն այցի շրջանակներում ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ:

Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2020թ. փետրվարի 26